

Թիւ 26778  
Մարտ 21, 1980

Մեծայարդ  
Տիար ներսէս ներսէսեան  
Ա. Յարութիւն նկեղեցւոյ  
ծխական Խորհուրդի Ասենապետ  
Մառլթ Միլուրքի.

Յարգելի Տիար ներսէսեան,

Ստացած ենք նկեղեցւոյդ տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Փետրուար 10ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով քուէարկութեան արդիւնը՝ կը ինդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաջեցէք փութով Առաջնորդարան որկել ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէնները եւ հեռածայնի թիւները, ինչպէս նաև Գերեզմանատան ելեւմտական հաշուեկշիռը եւ ներփակեալ ծխական Խորհուրդի ելեւմտական հաշուեկշիռը՝ գանձապահին կողմէ ստորագրել տալէ եաք:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Նկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԴՈՄ ԱՐՔԵՊԱՌԻԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Մաթիու Գատէմեան  
Տրդատ Տրդատեան  
Կրէյս Համինեան  
Սամ Համինեան  
Բասըլ Քէյիշեան